


ՀՐ. ՓԱՓԱՅՑՆ

Լոկ-

-ԴԱ-

-ԼՈԿ



891.99 լ

4-31

891.99.5
Գ 31

2011-07

ՎՐԹ. ՓՍՓԱԶՅԱՆ

ԼՈՒՐ-ԴԱ-ԼՈՒՐ

ՔՐԴԱԿԱՆ ՊՈԵՄԱ

Նկարները
վ. Վ.ԱԴԴ-ՊԱՏԻԿՅԱՆԻ

ՊԵՏՅՈՒՍ
ՀԱԿՑԵՍ ԿԿ ԿԻՑ ՍԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1937

28 SEP 2013

13303

ՄԻԶԻՆ ՏԱՐԻՔԻ ՀԱՄԱՐ

Պատ. Խմբագիր՝ Ռուր. Զ ա ր յ ա ն
Տեխ. Խմբագիր՝ Ս ս. Ա լ ը ռ ւ ն յ ա ն
Մրգարէ Վ. Գասպարյան
Հրատ. 4065. Գլավլիսի լիազոր Կ—4635
Պատկեր 953. Տիրաժ 4000
Պետհատի տպարան, Յեղեան, Լենինի փող. 65



56063 - 66

Անտեղ, Սև-ջրի չքնաղ լեզերքներին եր, վոր առկ-
րում եր Հասոն:

Յերկրի սիրուն և քաջ պատանին եր նա: Վոչ մի
մարդ չեր կարող նրան զինաթափ անել: Ավագակը սիրտ
չուներ նրա հոտի շուրջը ման գալ և վոչ իսկ գալը վոչ-
խարի կողքին քարշ դալ: Հասոն վորքան բարի յեր դե-
պի լավը, այնքան ել անզութ եր գեպի չարը:

Սիրուն եր Հասոն, նոր ծաղող արեի պես չքնաղ:
Յերկրի աղջիկների խելքը դնում եր նրան տեսնելիս:
Հապա նրա նվազելը: Նրա սրնզից հանած ձայները կա-
րելի՞ յեր, վոր հրեշտակները ունենալին այնքան զրա-
վիչ, այնքան սիրահուզուց Զայներ, վորոնք հոսում ելին
մելամազիկ, քչքչում ելին վորպես հեզիկ վրակի, դաբալ-
լում վորպես սիրահար սոխակ:

Մարդ թե անասուն, այդ ձայնը լսելիս, ակամա մոտ
ելին գալիս, քարանում և աշխատում ելին չկորցնել վոչ
մի խաղ, վոչ մի գեղգեղանքը:

Նստում եր Հասոն ժայռերի գլխին, աչքերը ուղղած
լայն հորիզոնին, Սև-ջուրը գալարապտույտ վոտքերի
տակին, զղղղուն զեփուռը խաղում ճակատին:

Յեվ նա նվազում եր:

Պետք եր տեսնել թե ինչպես վոչխարներն այն ան-
միտ՝ մոռացել ելին ուտելը, մոտ ելին գալիս:

Հասոն քարերին եր դողացնում, Սև-ջրի ալիքները
հուզում, բնությունն եր քարացնում, զեփուռին վողբաց-
նում ամեն ինչ շարժում, հրեշտակների նախանձը դրը-
գուում:

Ալդպես եր Հասոն:

Ել ինչպես վոչխարները չհնազանդելին նրա յերդի
ձայնին:

Ինքը չեր շարժվում, վոչխարներին նվազով կան-
չում եր մոտը:



Արածացնելու համար՝ «Բերիկը» ջրելու համար՝ «խոզաբը» և հեղ անասուններին շուրջը ժողովելու համար ածում եր «Վոչխարի կոչը»:

Վոչխարները լսելուն պես՝ թողնում ելին ամեն ինչ, անցնում ամեն բան, գալիս Հասովի շուրջը հավաքվում:

Ապրում եր Հասոն այդպես յերջանիկ, հեռու մարդկանցից, բնութան գրկում, լեռների կրծքին։ Յերջանիկ եր նա վորպես մի իշխան՝ սիրված իր հորից, նվիրված եր յերգին։

Բայց մի որ Հասոն տեսավ աղալի միակ աղջկան։
Տեսավ ու սիրեցի,

Սիրուն եր Զալիսեն։ Կախարդիչ աչքերը, սալվի յեր բուը, կամար՝ ունքերը, գողտիկ՝ թշերը։

Զալիսեն ել տեսավ Հասովին, Զալիսեն ել սիրեց Հասովին։ Տիսրեց խիստ Հասոն, կորցրեց աշխուժություն, կորցրեց զվարթություն։ Որերով պառկա եր գործում պարատի շուրջը, մինչև իսկ յեթե վոչխարն անտեղ ուտելու խոտ չգտներ։ Աչքը աշտարակին, նվազում եր տխրագին, սիրտը սրնդի մեջ դնում ու արտասվում։

Զալիսեն ել տանջվում եր։ Թագնված վարագուրի յետեռում, աչքը Հասովից չեր հեռացնում, վոչ ել ականջը նրա նվագից։ Վոչ ուտառում եր և վոչ ել խնում—տանջվում եր միայն։

Յերկուսն ել գիտելին, վոր շատ հեռու լեն միմանցից, վոր աղալի աղջիկը հովվին կին չի լինի։

Բայց սերը աստծո կրակն ե, շատ զորեղ կրակ։ Նա կտրում, անցնում եր ամեն հեռավորություն, թափանցում եր ամեն խորություն։

Սերը վոչ հեռավորություն ե ճանաչում, վոչ ել խրտըություն։

Հեռատես եր աղան ու խիստ խորամանկ։ Շուտով նկատեց Հասովի սերը։ Բարկացավ, կատաղեց, ուզեց սպա-

հել հանգուգն հովվին բայց խոհեմ եր. չուզեց իր տան
անունը կոտրել հավիտքան և մի հովվի արյունը մտնել
ընդունալու:

Բայց ի՞նչ կասեցին՝ յեթե իմաստին, վոր մի չոբան
նրա աղջկա յետիիցն ե ընկել. Պետք եր Հասոցին հեռա-
ցնել. հեռացնել ինքնակամ, զոհ խորամանելության. Պետք
եր այնպիսի մի խաղ սարքել, վոր Հասոն ինքը թող-
ներ հեռանար և մեկ ել այդ կողմերը չվերադառնար:

Մտածեց աղան, յերկար մտածեց ու գտավ հնարքը:

Մարդ ուղարկեց, կանչեց Հասոլին և ասաց նրան.

«Գիտեմ, Հասն, — ասաց չար աղան, — գիտեմ վոր սի-
րում ես դու իմ աղջկան: Քաջ տղա յես ինքդ, լսել եմ,
լավ ել ածում ես սրինդ: Աղջիկս քեզ կտամ, միայն կը-
դնեմ մի պայման:

«Լսել եմ, վոր վոչխարները քեզ հնազանդվում են և
սրնդիդ ձայնից գրավված՝ քեզ մոտ գալիս են:

«Գետնից մինչ այդ բարձր աշտարակը, տեսնմում ես
նրան, դնել կտան փայտլա սանդուխքը. դու կնստես այն-
տեղ, բարձրում, վոչխարները կժողովվեն ցածրում: Ահա
պայմանը: Յեթե դու բարձրից, սրինդ հնչեցներով, կա-
րողացար վոչխարներին սանդուխքի վրալով քեզ մոտ վեր
հանել, այն ժամանա՛ աղջիկս քեզ հալալ, առ ու փայելիր:

«Ապա թե վոչ՝ խայտառակ յեղիր, ինչ ունես-չու-
նես հավաքիր, և քանի շուտ ե՛ այս կողմերից հեռացիր:
Մի հովիվ աղայի փեսա չի լինիլ, այդ ել խելքիցդ հա-
նիր»...

Հասոն ժպտաց, խոր գլուխ տվեց:

— Տե՛ր ես, աղա, — ասաց, — ասածիդ համաձայն եմ:

Յեվ շինել տվեց աղան փայտլա սանդուխքը: Իննը-
սուն և իննը աստիճան ուներ նա: Հասոլից ծածուկ կոտ-
րեց նրա մեջտեղի մի աստիճանը. կոտրածը նույն կեր-
պով դրեց իր տեղը, այնպես վոր վոչինչ չեր յերեվում.
Բայց մի թուլ սեղմում հերիք կլիներ փայտը ձգելու և

մի աստիճանից դեպի մյուսը՝ մի գաղաչափ տեղ բաց
թողնելու: Ալդպիսով ել վոչխարների անցնելը անհնար
դարձնելու:

Ո՛, չար եր աղան, հպարտ եր և անպարտ:

Ալդ խալտառակությունն արեգ չար աղան: Հասոլին
աշտարակի ծալը հանեց, Զալիսելին պատշգամբի վրա՝
ու ասաց հովվին.

— Ահա Զալիսեն, խրախուսվիր, հալալ ե քեզ նա, թե
ասածս արիր:

Զալիսեն տեսավ Հասոլին, ժպտաց նրան, կարմրեց
և նշան աբավ: Իմացավ հովիվը, վոր Զալիսեն ել սիրում
եր նրան: Սիրան ուրախությունով լցվեց: Առավ սրինդը,
բերնին դրեց, քրոլոզը, ծառից նվազն սկսեց:

Թնդաց սար ու ձոր, շարժվեցին ծառեր, դողացին
քարեր: Հուղվեց չար աղան, խելահեղ՝ Զալիսեն, քիչ
մնաց թոներ ու ցած դնար, վոչխարների պես ընկներ
Հասոլի վոտքերը:

Շարժվեցին վոչխարները, մոտեցան սանդուխքին ու
սկսեցին միմյանց յետերից բարձրանալ աշտարակն ի վեր:

— Լո՛, լո՛, լո՛ Մեջրի չոբան, սար ու ձոր մղկտաց-
նող ջիվան, գաղան մեղմացնող, քար ու ծառ հուղող
չոբան: Ինչու հիւարի պես հավատացիր աղային, ինչու
բարձրացար ծալըն աշտարակի: Զուր դառնուցիր մորդ
փորում, Հասո: Յերանի չմանելիր այս աշխարհը՝ վոր լի լի
աղաներով: Յերանի չտեսնելիր արեկի փալլը՝ վոր քեզ
ալրեց խորովեց, Մեջրի ալիքները՝ վորը քեզ տրորեց,
շամբի որորվելը՝ վոր քեզ կախարդեց:

— Լո՛, լո՛, լո՛, ... Միթե քյուրդն ալդքան անազնիվ յե-
ղավ, վոր սերը ծաղրեց: Միթե նրա խիղճը կորավ, աս-
տվածը մոռացավ:

Խեղճ Հասոլին ինչու շելթանի բաժին տրավ, աշ-
խարհը լաց ու սուզի մեջ դրավ... լո՛, լո՛...



Հարաբեկ վոչխարները, հրում միմյանց
սրնգի ձայնից դլութված՝ մոռանում ելին անդունդը: Ա-
քերը Հասովին ուղղած՝ բարձրանում ելին:

Աշխարհը զմապված դիտում եր: Զար աղան քար եր
կտրել: Զալխեն մինչև կես մեջքը կուցել, ձեռները Հա-
սովին պարզել գոչում եր.

— Յես քոնն եմ, Հասոն, քոնը հավիտյան: Յես քեզ
սիրում եմ, այնքան եմ սիրում, վորքան չեր սիրում Լել-
լանը Մեջլումին: Յես քեզ սիրում եմ. այնքան եմ սի-
րում, վորքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վար-
դին, աշխարհը արեին և բուլսը հողին:

Դո՛ւ յես իմ ճրագը, դու յես իմ վարդը, դո՛ւ յես իմ
արեկը ու դո՛ւ իմ հողը...

Լսում եր Հասոն, սիրտը խշխշում: Ածում եր, ա-
ծում, նվազն ուժովցնում:

Հասավ ների¹) ալծը կոտրած աստիճանին, զգաց վոր,
մանը աչքի առաջն ե, բայց դլութված եր, վորքը գրեց
փայտի վրա:

Շարժվեց փայտը, լսվեց մի մալուն և սիրուն ներին
պտույտ գործելով ողի մեջ, զնաց ջախջախվելու անդուն-
դի քարերի վրա:


Մղկտաց Հասոն: — Նել վախ, իմ սիրուն ների, — կանչեց
սրտաբուղիս: Բայց աչքը յերբ Զալխելին ընկավ մոռացավ
ներին: Սրինգը գրեց բերնին և սկսեց ածել:

Վոչխարները տեսան ներիի վիճակը. կանգ առին,
մտածեցին իետ զնոտ, բայց դլութված ելին, առաջ զնա-
ցին:

Փորձեց առաջին վոչխարը, յետիւտ քաշվեց, առջիի
վոտքերը բարձրացրեց և ուզեց թոնել: Մի մալուն ար-
ձակեց և գնաց ածի յետիից:

— Վախ, վախ, իմ անմեղ վոչխար, մղկտաց Հասոն:

¹⁾ Առաջնորդող այծ:



Նայեց Զալիսելին, մոռացավ վոչխարին, ուժ տալով
նվազին:

Փորձեց լերկըռըդ վոչխարը, մինչև իսկ թռավ, բայց
կպավ աստիճանին, որ պտուլտ գործեց, խղճուկ կերպով
մայեց և գնաց դիպի խոր անդունդը:

— Թռե՛ք, անցե՛ք իմ սիրուն վոչխարներ, լերգում
եր Հասոն, թռե՛ք, իմ թափամազ գառնուկներ, յեկե՞ք ձեր
տիրոջ մոտ:

Վոչխարները ել չելին շարժվում. լետ-լետ ելին
գնում:

Կատաղեց Հասոն—բացվածքը չեր տեսնում: Վորքան
սեր ուներ ու զգացնունք, ներշնչեց սրնգին. գեղղե-
ղանքներով քարացրեց բնությունը.—բայց վոչխարները
յետ-լետ ելին գնում:

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ յեղավ Զալիսեն
հուսահատությունից:

Փոխեց Հասոն լեղանակը:

Այժմ ինքն ել չգիտեր՝ ինչ եր նվազածը:

Դադարել եր քամին, կանգնել եր ջուրը, լռել ամեն
ինչ:

Ո՞վ չի լսել «Լուր-դա-լուր»-ը, վորին չի դիմանա
վնչ մի քար սիրու: Վորին լսելով կթոթուս սիրող սիր-
ու, կմարի: Վորին լսելով կգժվի սիրող աղջիկը, կգրժ-
վի և դեպի սիրածը կուշնա:

Սքանչելի յե նա, յերգերի փառքն ե նա:

Հրեշտակների մրմունջը, Հասոյի հոգին ե նա:

Շարժվեցին վոչխարները, գլորվեցին շատերը:

Շարժվեց և Հասոն, կուացավ, տեսավ բացվածքը:

Հասկացավ ամեն ինչ, նայեց աղալին:

Զգաց, վոր Զալիսեն կորած եր իր համար, ինքն ել
աշխարհի համար:

Շարժվեց Զալիսեն ել, նայեց աղալին, նայեց Հա-
սոյին,

Զգաց, վոր Հասոն կորել եւ իր համար, ինքն ել աշ-
խարհի համար:

Յեվ լոեց ամեն ինչ...

«Լուր-դա-լուր»-ը դադարեց նրա, խաղի վերջին թըր-
թոռումը գնաց մեռնելու ողի մեջ...

Հետո... լսվեց մի ճիչ:

Յեվ յերկու մարմիններն արագ պառուտ գործելով ողի
մեջ, գնացին միասին, ջախջախվելու անդունդի խոր-
քում... և մինչանց դրկում:

Հասոն ու Զալխեն ելին դրանք...



29

13503

ԳԻՒԸ 2 ր.

1
2

8m

В. ПАПАЗАН
ЛУР-ДА-ЛУР
ГИЭ АРМ. ССР ЕРЕВАН

